ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 43-Լ **«10» հուլիսի 2024 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 12-Ի N 28-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի հուլիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» N 28-Լ հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) հրամանի հավելվածի 11-րդ կետի՝

ա. 52-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «օտարերկրյա պետություններում ստացված գիտական աստիճանի և գիտական կոչման փաստաթղթերը (դիպլոմը, վկայագիրը) Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանի և գիտական կոչման փաստաթղթերին (դիպլոմին, վկայագրին) համապատասխանեցումը, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան սահմանված չէ»,

բ. 55-րդ և 56-րդ ենթակետերում «մշակումը և Նախարարի հաստատմանը ներկայացնելը» բառերը փոխարինել «հաստատումը» բառով:

ՆԱԽԱՐԱՐ՝ **ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**